

Հաստատված է «Ակտինա Կապիտալ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության
Արտահերթ Ընդհանուր Ժողովի Նիստի
Թիվ 2026/03/23-1 Արձանագրությամբ
Տնօրենի ժ/պ՝ Սերգեյ Գալոյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ ՍՊԸ

Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
1	23.03.2026	23.03.2026

ԵՐԵՎԱՆ
2026թ.

ՆՊԱՏԱԿԸ

1. «Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման» Կանոնակարգ (այսուհետ՝ «**Կանոնակարգ**») նպատակն է սահմանել «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կողմից միջազգային պատժամիջոցների համապատասխանության, միջազգային պատժամիջոցների շրջանցման հետ կապված ռիսկերի գնահատման, դրանց զսպմանն ուղղված միջոցառումների իրականացման, մշտադիտարկման, հսկողական համակարգի գործարկման և հաշվետվողականության գործընթացների հիմնական սկզբունքները և ընթացակարգերը: Սույն Կանոնակարգի նպատակն է ներդնել ներքին հսկողական այնպիսի համակարգեր, որոնք հնարավորություն կտան լիարժեք և արդյունավետ կերպով հայտնաբերել, գնահատել, արգելափակել կամ մերժել միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկ պարունակող գործարքները:

2. Սույն Կանոնակարգը սահմանում է այն սկզբունքները և ստանդարտները, որոնք նախատեսված են.

- 2.1. շեշտադրել Ընկերության գրոյական հանդուրժողականությունը միջազգային պատժամիջոցների պահանջների խախտման նկատմամբ,
- 2.2. սահմանել արդյունավետ հսկողական համակարգ՝ այդ թվում պատժամիջոցների համապատասխանության ծրագիր,
- 2.3. ապահովել պատժամիջոցների վերաբերյալ համապատասխանության մշակույթի պատշաճ և համարժեք տարածում, որն արտացոլվում է անձնակազմի ուսուցման, և վերապատրաստման ծրագրերում:

3. Սույն Կանոնակարգը մշակված է ՀՀ, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ պետությունների, միջազգային պատժամիջոցներ սահմանող կառույցների, տնտեսական միությունների երկրների օրենսդրության, Ընկերության գործընկերների կողմից առաջ բերված կոմենանտների և դրանց հիման վրա ընդունված միջազգային պատժամիջոցների համապատասխանության պահպանմանը առնչվող իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

4. Ընկերությունը իրականացնում է սույն Կանոնակարգի վերանայում տարեկան պարբերականությամբ, ինչպես նաև Ընկերությունում կամ շուկայում տեղի ունեցած էական փոփոխության դեպքում:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

5. Կանոնակարգի դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, ղեկավարների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների վրա:

6. Սույն Քաղաքականությամբ սահմանվող գործընթացի մաս կազմող առանձին գործառույթները/քայլերը Ընկերության առանձին ստորաբաժանումներում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն են կրում Ընկերության տվյալ ստորաբաժանումների ղեկավարները:

7. Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման ծրագրի պահանջների պահպանման վերահսկողության մասով պատասխանատվություն է կրում Պատասխանատու աշխատակիցը:

8. Գործընթացում ներգրավված յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում սույն Կանոնակարգի գործողությունների պահպանման և կատարման համար՝ սույն Կանոնակարգով սահմանված իրենց գործառույթների շրջանակներում:

9. Ընկերության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների կողմից սույն Կանոնակարգով սահմանված պահանջների խախտումներ թույլ տալու դեպքում, Գործադիր տնօրենը նրանց նկատմամբ կարող է կիրառել ՀՀ օրենսդրությամբ և/կամ ներքին իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

10. Սույն Կանոնակարգով սահմանվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի ստորաբաժանումը:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Սույն Կանոնակարգով օգտագործվող հասկացությունները ունեն ստորև բացահայտված նշանակությունը.

11.1. **Միջազգային պատժամիջոցներ՝** միջազգային կազմակերպությունների կամ պետությունների կողմից կիրառվող ցանկացած տնտեսական, ֆինանսական, առևտրային կամ այլ սահմանափակող միջոցառումները, այդ թվում՝ գույքի սառեցումը կամ արգելափակումը, միջոցների կամ տնտեսական ռեսուրսների հասանելիության սահմանափակումը, ոլորտային ֆինանսավորման կամ ներդրումային սահմանափակումները, առևտրի, արտահանման կամ ներմուծման վերահսկողությունը, ծառայությունների արգելքները և վերոնշյալ սահմանափակումների շրջանցման դեմ պայքարի միջոցառումները:

11.2. **Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկ՝** միջազգային պատժամիջոցների շրջանցման հետևանքով բանկի կորուստներ կրելու հավանականությունն:

11.3. **ՄԱԿ ԱՆ ԲԱՆԱԾՆԵՐ՝** Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության Խորհրդի կողմից հրախարակված բանաձևեր:

11.4. **Հաճախորդ՝** Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձն է, ինչպես նաև այն անձը, որը Ընկերությանը առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք:

11.5. **Գործարար հարաբերություն՝** հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:

11.6. **Իրական շահառու՝** ֆիզիկական անձ է, որին իրականում (փաստացի) պատկանում է իրավաբանական անձ հաճախորդը, կամ որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին, կամ որի անունից կատարվում է գործարքը: Տրաստի կամ այլ համանման իրավաբանական կազմավորման իրական շահառու են համարվում տրաստի դեպքում հիմնադիրը, կառավարիչը, շահառուն (այդ թվում՝ շահառուների դասը), շահերի պաշտպանը (առկայության դեպքում) և իրական (փաստացի) վերահսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձինք, իսկ այլ համանման իրավաբանական կազմավորման դեպքում՝ համարժեք կամ համանման գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք: Իրավաբանական անձի իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա

չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

- 11.7. **Սպասարկող աշխատակից (ՍՍ աշխատակից)**՝ Ընկերության առաջնային օաղակի աշխատակից, որն իրականացնում է հաճախորդի նույնականացումը և սպասարկումը:
- 11.8. **Պատասխանատու անձ**՝ Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման և Միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման համար պատասխանատու աշխատակից:
- 11.9. **KYC (Ճանաչիր Հաճախորդիդ)**՝ Ճանաչիր հաճախորդիդ սկզբունք (KYC)՝ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք, որը ենթադրում է հաճախորդի նույնականացման և ինքնության տվյալների հավաքագրման, հաճախորդի գործարար բնութագրի պարզաբանման, վերջինիս վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների պարբերաբար թարմացման պահանջ և կիրառվում է հաճախորդի ու նրակողմից կատարված գործարքների պատշաճ ուսումնասիրության իրականացման համար:
- 11.10. **50 տոկոսի սկզբունք**՝ Սկզբունք, ըստ որի կազմակերպությունը ինքնաշխատ եղանակով դիտարկվում է որպես միջազգային պատժամիջոցների ենթարկված, եթե վերջինիս կանոնադրական կապիտալում գերակշռում է (50% և ավել) միջազգային պատժամիջոցների ենթարկված անձի (անձանց) մասնակցությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵՐԸ

12. Ընկերությունում Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է հսկողական երեք գծերի կառավարման մոդելի վրա, որտեղ հսկողական առաջին գծի գործառույթները վերապահված են հաճախորդին սպասարկող ստորաբաժանման աշխատակիցներին, հսկողական երկրորդ գծի գործառույթները՝ Պատասխանատու աշխատակցին, իսկ երրորդ գծի գործառույթները՝ ներքին աուդիտին:

13. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) պատասխանատու է Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման արդյունավետ ներքին համակարգի ձևավորման համար, ինչպես նաև ապահովում է դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:

14. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

- 14.1. Հաստատում է Ընկերության Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման ներքին հսկողության և դիտանցման վերաբերյալ ներքին իրավական ակտերը՝ նվազագույնը տարեկան մեկ անգամ իրականացնելով վերանայում, ինչպես նաև այն դեպքում, երբ Ընկերությունում կամ շուկայում տեղի ունեցած էական փոփոխություններ:
- 14.2. Իրականացնում է Ընկերության գործադիր մարմնի կողմից Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման նպատակով ներքին հսկողության համապատասխան համակարգի ներդրման և ապահովման վերահսկողությունը և այդ համակարգի արդյունավետության ուսումնասիրությունը:
- 14.3. Հաստատում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի

կառավարման գործընթացի թերությունների, բացթողումների և ձախողումների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը,

- 14.4. Քննարկում և հաստատում է Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման կանոնակարգման ոլորտում աուդիտորական կամ այլ ստուգմամբ (ուսումնասիրությամբ) բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները, տալիս թերությունների վերացմանն ուղղված հանձնարարականներ և վերահսկում է դրանց կատարման գործընթացը:
- 14.5. Նվազագույնը կիսամյակային պարբերականությամբ ստանում, քննարկում և հաստատում է Պատասխանատու աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվությունները:
- 14.6. Հաստատի միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բյուջե:
- 14.7. Իրականացնում է Օրենքով, սույն Կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
15. Ընկերության գործադիր մարմինը Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.
 - 15.1. Ապահովում է Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման ներքին հսկողության և դիտանցման վերաբերյալ ներքին իրավական ակտերի ներդրումը և դրանց արդյունավետ իրականացումը:
 - 15.2. Ապահովում է Ընկերության աշխատակիցների Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման ոլորտում պատշաճ ուսուցումը:
 - 15.3. Պատասխանատվություն է կրում Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման քաղաքականության և գործընթացի ներդրման, ինչպես նաև դրանց ընթացիկ արդյունավետ իրականացման համար:
 - 15.4. Սահմանում է Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի պարտականությունները և պատասխանատվության շրջանակը, նշանակի պատասխանատու անձի:
 - 15.5. Ապահովում է Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման նպատակով ամենօրյա աշխատանքների կատարման համար բավարար տեխնոլոգիական, փորձագիտական և այլ ռեսուրսների առկայությունը:
 - 15.6. Ապահովում է Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի թերությունների ու բացթողումների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագրի իրականացումը:
 - 15.7. Իրականացնում է Օրենքով, սույն Կանոնակարգով և ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով սահմանված գործառույթներ:
16. Ընկերությունում Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործառույթը վերապահված է Պատասխանատու աշխատակցին, որը Կանոնակարգով և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի ավագ ղեկավարության կարգավիճակ: Պատասխանատու աշխատակիցը՝

- 16.1. Իրականացնում է հաճախորդների, հաճախորդի կոնտրագենտների և Ընկերության կոնտրագենտների, ինչպես նաև գործարքների բոլոր կողմերի պատշաճ ուսումնասիրություն: Այդ նպատակով իրականացնում է վերլուծություններ և պահպանում դրանց արդյունքները:
- 16.2. Իրականացնում է Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման համակարգի ներդրումը և կիրառումը:
- 16.3. Իրականացնում է հաճախորդների և կոնտրագենտների միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկայնության գնահատում:
- 16.4. Իրականացնում է գործարքների դիտանցում միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի վերհանման նպատակով,
- 16.5. Իրականացնում է հաճախորդների և կոնտրագենտների գործունեության մշտադիտարկում՝ միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի վերհանման նպատակով,
- 16.6. Գնահատում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի նույնականացման գործընթացի արդյունավետությունը,
- 16.7. Հավաքագրում և պահպանում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացում բացահայտված տեղեկատվությունը:
- 16.8. Տրամադրում է խորհրդատվություն օժանդակում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնին՝ Փ Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման հետ կապված իրենց գործառնությունները կատարելու հարցերում,
- 16.9. Իրականացնում է Ընկերությունում նոր պրոդուկտների, գործող պրոդուկտների նոր ուղիների գործարկման, ֆինանսական գործիքների, գործընթացների ներդրման և/կամ դրանց էական փոփոխությունների դեպքում Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի գնահատում, ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:
17. Ընկերությունում Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման համակարգի ներդրումը (այդ թվում՝ ներքին իրավական ակտերի մշակումը, վերանայումը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնի հաստատման ներկայացումը) և վերահսկողությունն իրականացվում է Պատասխանատու աշխատակցի կողմից, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, միջազգային ստանդարտներով և պահանջներով, Ընկերության կանոնադրությամբ, սույն Կանոնակարգով, Ընկերության ներքին իրավական ակտերով, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) որոշումներով, հանձնարարականներով, գործադիր մարմնի հրամաններով ու կարգադրություններով:
18. Պատասխանատու աշխատակիցը/աշխատակիցները իրավունք ունեն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) անմիջականորեն ներկայացնելու Ընկերության Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) և գործադիր մարմնի կողմից Միջազգային պատժամիջոցների համապատասխանությանը և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարմանն առնչվող հարցերի քննարկմանը:
19. Պատասխանատու աշխատակիցն աջակցում է միջազգային պատժամիջոցների գծով վերահսկող մարմիններից և գործընկեր ֆինանսական հաստատություններից ստացված հարցումների պատասխանների պատրաստմանը՝ միջազգային պատժամիջոցների

պահպանմանն ուղղված հարցադրումների մասով:

20. Պատասխանատու աշխատակիցը ոչ ուշ քան կիսամյակը մեկ անգամ, կիսամյակին հաջորդող երկրորդ ամսվա 20-ը (եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) պահանջով) կազմում և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (միակ մասնակցին) է ներկայացնում Օրենքով և ներքին իրավական ակտերով սահմանված հաշվետվությունները:

21. Պատասխանատու աշխատակցի կողմից Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (միակ մասնակցին) ներկայացվող կիսամյակային հերթական հաշվետվությունը նվազագույնը ներառում է.

21.1. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի, դրա բաղադրիչների, իրականացման ընթացքի և միջազգային պատժամիջոցների շրջանցման վերաբերյալ բոլոր ռիսկերի վերաբերյալ տվյալներ և տեղեկատվություն,

21.2. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի բացահայտված թերությունները, ծախսողումները և բացթողումները,

21.3. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի գնահատման արդյունքները,

21.4. Միջազգային պատժամիջոցների վերաբերյալ կարգավորումների հնարավոր խախտումների վերաբերյալ տեղեկատվություն:

22. Միջազգային պատժամիջոցների համապատասխանությունը և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարումը Ընկերության յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է և Ընկերության բոլոր աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում հաճախորդի, գործակալի, լիազոր անձի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված ցանկացած երրորդ անձի կողմից Միջազգային պատժամիջոցների շրջանցման կասկածելի գործարքների առկայության մասին պարտավոր են անհապաղ տեղեկացնել Պատասխանատու աշխատակցին:

23. Միջազգային պատժամիջոցների համապատասխանությունը և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարմանը վերաբերող Պատասխանատու աշխատակցի կողմից ուղարկվող գրությունները, հանձնարարականները և կարգադրությունները ենթակա են պարտադիր կատարման Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից, իսկ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է պահպանման առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:

24. Ընկերության բոլոր աշխատակիցները պարտավոր են միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման վերաբերյալ ներքին հսկողության համակարգում թերությունների, ծախսողումների և բացթողումների բացահայտման դեպքերն անհապաղ ներկայացնել Պատասխանատու աշխատակցին, որը իր հերթին պարտավոր է դիտարկել միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի զսպմանը և վերացմանն ուղղված արդյունավետ միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը:

25. Միջազգային պատժամիջոցներից բխող պահանջների պահպանման հետ կապված անհամապատասխանությունները, երրորդ անձանցից հարցումները և հարցադրումները պետք է անմիջապես տեղեկացվեն Պատասխանատու աշխատակցին:

26. Ընկերության աշխատակիցները պարտավոր են իրականացնել հաճախորդների սպասարկումը՝ պահպանելով Ընկերության կողմից կիրառված մոտեցումը՝ երկրների հանդեպ, երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և/կամ գործունեության ոլորտների սահմանափակումների մասով:

27. Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և շրջանցման ռիսկի կառավարման համակարգի մասն են կազմում նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում Ընկերության ներքին իրավական ակտերը, որոնք սահմանում են Ընկերության՝ միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակը հաճախորդներին

սպասարկման ընդունելու գործընթացի նկատմամբ, մասնավորապես՝ հաճախորդների նույնականացման, պատշաճ ուսումնասիրության և բարձր ռիսկային հաճախորդների նկատմամբ շարունակական մոնիտորինգի կիրառման մասով: Նշված ակտերը սահմանում են նաև բարձր ռիսկային գործարքները հայտնաբերելու, բլոկավորելու և մերժելու գործընթացները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

28. Ընկերությունում պահպանվում են միջազգային պատժամիջոցների հետևյալ տեսակները.

28.1. երկրների նկատմամբ կիրառված սահմանափակումները,

28.2. երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների նկատմամբ կիրառված սահմանափակումները,

28.3. անձերի նկատմամբ կիրառված սահմանափակումները,

28.4. գույքի սառեցման պահանջները:

29. Ընկերությունը Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի հսկողության գործընթացում ղեկավարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերով (ՄԱԿ ԱԽ Բանաձևեր):

30. Ընկերությունը հետևում Միջազգային պատժամիջոցների վերաբերյալ այն երկրների կամ Միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված կարգավորումներին, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով կարող են ազդեցություն ունենալ ներդրումային ընկերության գործունեության վրա:

31. Սույն Կանոնակարգի 21-րդ կետի իմաստով Ընկերությունը անկախ գործունեության վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության փաստացի կամ իրավական առկայությունից հետևում է հետևյալ երկրների կողմից հրապարակվող Միջազգային պատժամիջոցներին՝

31.1. Ամերիկայի Միացված Նահանգներ, որի շրջանակներում մասնավորապես ԱԱՀԳ և ԱՄՆ Արդյունաբերության և Անվտանգության Բյուրոյի կողմից հրապարակվող սահմանափակումներին:

31.2. Եվրոպական Միություն:

31.3. Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միացյալ թագավորություն, որի շրջանակներում մասնավորապես՝ Ֆինանսական պատժամիջոցների կիրառման գրասենյակի կողմից հրապարակվող սահմանափակումներին:

32. Անկախ զբաղեցրած պաշտոնից՝ Ընկերության բոլոր աշխատակիցներին արգելվում է աջակցել, անգործություն ցուցաբերել, փոխակերպել կամ քողարկել տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրականացնել հաճախորդներին միջազգային պատժամիջոցների պահանջներից խուսափելու նպատակով:

33. Միջազգային պատժամիջոցներով սահմանված պահանջների տարընկալման դեպքում պատժամիջոցներով սահմանված դրույթների կատարումն ենթակա է մեկնաբանման Պատասխանատու աշխատակցի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության՝ իրավաբանական և համապատասխանության գործառույթն իրականացնող Ընկերության կառուցվածքային ստորաբաժանման աջակցությամբ:

34. Պատասխանատու աշխատակիցը, ելնելով գործընկեր ֆինանսական հաստատությունների մոտեցումներից և միջազգային պատժամիջոցներից բխող հնարավոր ռիսկերից և գործարար պրակտիկայում ընդունված վարքագծից, կարող է առաջարկել կիրառել միջազգային պատժամիջոցների պահանջներից առավել խիստ մոտեցում, եթե Պատասխանատու աշխատակցի կարծիքով դա անհրաժեշտ է համբավի և ֆինանսական ռիսկերը նվազեցնելու համար:

35. Պատասխանատու աշխատակիցը նախքան նոր պրոդուկտների/ծառայությունների գործարկումը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ընթացակարգով սահմանված ձևաչափին զուգահեռ վերծանում է նաև Միջազգային պատժամիջոցների և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերը՝ անդրադարձ կատարելով աշխարհագրական գործոններին, նախատեսվող թիրախային հաճախորդներից բխող ռիսկերին, պրոդուկտի խոցելիություններին միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի տեսանկյունից:

36. Այն դեպքում, երբ իրավաբանական անձի 50 (հիսուն) և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակից ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով վերաբերելի են միջազգային պատժամիջոցների պահանջները (**առկա է 50 տոկոսի սկզբունքը**), Պատասխանատու աշխատակիցը կարող է կիրառել առավել խիստ մոտեցում, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում հաշվի առնելով օրենսդրության պահանջները, գործարար սովորույթները, նախատեսվող գործարքից (գործարար հարաբերությունից) բխող ռիսկերը, միջազգային գործընկերների մոտեցումները, ինչպես նաև այն դեպքերում, երբ տվյալ իրավաբանական անձի բոլոր սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը սպառիչ չէ կամ առկա են կասկածներ իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ:

37. Միջազգային պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ գործարքներ կնքելիս Ընկերությունը ղեկավարվում է միջազգային պատժամիջոցներից բխող պահանջներով և պատժամիջոցը նախատեսող համապատասխան իրավական ակտի և դրանց վերաբերյալ մեկնաբանություններ/պարզաբանումների դրույթներով:

38. Եթե գործող հաճախորդի կամ նրա գործարքների նկատմամբ որևէ պահից կիրառվում են միջազգային պատժամիջոցներ, ապա Ընկերությունը խելամիտ ժամկետում կիրառում է միջազգային պատժամիջոցներով սահմանված պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դադարեցնելով հաճախորդի հետ գործարար հարաբերությունը և/կամ մերժելով գործարքները, ինչն իրականացվում է նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Նշված դրույթները կիրառելի են նաև Ընկերության գործընկեր ֆինանսական հաստատությունների, մատակարարների և համագործակցող այլ անձանց հետ հարաբերություններում: Ֆինանսական դիտարկումներ կենտրոնին ներկայացվում է կասկածելի գործարքի մասին հաշվետվություն, եթե համընկնությունն առկա է ՄԱԿ-ի ԱԽ ցանկերի հետ և քայլեր են ձեռնարկվում նշված հաճախորդի հետ գործարար հարաբերությունը խզելու ուղղությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿ

39. Ընկերությունը շարունակաբար գնահատում է իր խոցելիությունը, հանդուրժողականությունը և ախորժակը պատժամիջոցների ռիսկի նկատմամբ: Հաշվի առնելով որ երկրի աշխարհագրական դիրքը՝ մասնավորապես հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանային անցակետ ունենալու հանգամանքը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հետ նույն տնտեսական գոտում լինելն ու սերտ առևտրային հարաբերություններ ունենալը ծնում է պատժամիջոցների շրջանցման ռիսկեր, Ընկերությունը շեշտադրում է իր գրոյական հանդուրժողականությունը պատժամիջոցների խախտման նկատմամբ և Ռիսկի ախորժակի շրջանակներում մերժում է առնվազն.

39.1. ԱՄՆ, ՄԱԿ ԱԽ-ի, ԵՄ-ի և ՄԹ-ի կողմից հրապարակվող պատժամիջոցների ցանկերում առկա ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ իրականացվող գործարքը կամ գործարար հարաբերության հաստատումը: Այս դրույթը տարածվում է նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց 50%

և ավել բաժնեմաս ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն ցուցակված է վերոնշյալ ցանկերում (50% սկզբունք):

39.2. Հանրամատչելի հավաստի աղբյուրներում և լայնորեն կիրառվող տեղեկատվական շտեմարաններում (Worldcheck, Accuity և այլն) որպես «պատժամիջոցների հետ ասոցացվող անձ» բնութագրվող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ գործարար հարաբերության հաստատումն ու գործարքի իրականացումը, այն է.

39.2.1. այն անձանց, ովքեր ուղղակի կապ ունեն պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների հետ, օրինակ՝ ցանկերում ներառված անձանց ընտանիքի անդամներ, այդ թվում՝ կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, եթե առկա է ողջամիտ կասկած միջազգային պատժամիջոցների ներքո գտնվող անձանց պատկանող գույքի շրջանառման վտանգի վերաբերյալ, իրավաբանական անձանց դեպքում՝ սեփականատերեր, իրական շահառու, իրավաբանական անձի կառուցվածքում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք¹, եթե առկա է ողջամիտ կասկած բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձի կողմից միջազգային պատժամիջոցների ենթարկված իրավաբանական անձի գույքը շրջանառելու վերաբերյալ (սահմանված է ՌԻսկ ախորժակով):

39.3. գործարքի իրականացումը, եթե գործարքում ներգրավված երկրների կամ տարածքների, ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների հանդեպ կիրառված են պատժամիջոցներ:

39.4. ԱՄՆ Արդյունաբերության և Անվտանգության Բյուրոյի կողմից արգելված ԱՄՆ ծագում ունեցող ապրանքների արտահանման կամ վերաարտահանման համար իրականացվող գործարքները դեպի Ռուսաստան և Բելառուս՝ համաձայն տվյալ պահին գործող արտահանման վարչարարության կարգավորումների:

39.5. Ցանկացած արժեթուղթ/պարտատոմս թողարկող անձի հետ գործարքի իրականացումը, եթե ստուգման արդյունքում առկա կլինի դրական համընկնում միջազգային պատժամիջոցների ցանկերի հետ:

40. Միջազգային պատժամիջոցների ռիսկ ախորժակը սահմանվում է նաև Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկի հանդուրժողականության մակարդակի (ռիսկ ախորժակի) որակական և քանակական չափանիշների վերաբերյալ կարգով:

41. Երկրորդային պատժամիջոցների տակ գտնվող երկրների քաղաքացիներին պրոդուկտներ/ծառայություններ մատուցելիս Ընկերությունը հավաստիանաում է, որ առկա չէ պատժամիջոցների խախտում կամ շրջանցում՝ հավաքագրելով վերջիններիս ռեզիդենտությունը, կենսական շահերի կենտրոնը և միջոցների գոյացման աղբյուրը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև բացահայտել ՀՀ-ում տնտեսական շահը:

42. Նշված հաճախորդների նկատմամբ ի թիվս Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ներքին իրավական ակտերով սահմանվող պատշաճ ուսումնասիրության պահանջների, կիրառվում է նաև պատժամիջոցների համապատասխանության շարունակական մոնիթորինգ, պատշաճ ուսումնասիրության իրականացում, գործարար հարաբերության ընթացքում պատժամիջոցների շրջանցման ռիսկեր հայտանբերելու դեպքում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ այդ հաճախորդների հետ գործարար հարաբերությունները դադարեցնելու ուղղությամբ:

43. Ընկերության կողմից սույն Կանոնակարգով սահմանված սահմանափակող միջոցառումների իրականացման կարգը սահմանվում է Ընկերության «Փողերի լվացման և

¹ Խորհրդի/վարչության/գործադիր մարմնի անդամներ:

սահաբեկչության դեմ պայքարի» ոլորտը կարգավորող Ընկերության այլ ներքին իրավական ակտերով:

44. Ընկերության մարքեթինգային ռազմավարությունը մշակվում է այնպես, որպեսզի չթիրախավորվեն պատժամիջոցների ենթարկված երկրների հետ առնչվող կամ այդ երկրների հետ որոշակի գործունեություն ծավալող հաճախորդները, ինչը կարող է հանգեցնել պատժամիջոցների խախտման, շրջանցման և համբավի ռիսկի առաջացման:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄ

45. Ընկերությունը իրականացնում է հաճախորդների և գործարքների սուգում, ինչպես նաև դիտանցում Միջազգային պատժամիջոցների պահանջների համապատասխանության ապահովման նպատակով:

46. Ընկերությունը Միջազգային պատժամիջոցների ցանկերով ստուգումներն (դիտանցումը) իրականացնում է առնվազն ստորև նշվածների նկատմամբ.

46.1. Հաճախորդների.

46.2. Իրավաբանական անձ հաճախորդների սեփականատերերի և/կամ իրական շահառուների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի (ղեկավարների).

46.3. Լիազորված անձանց, ինչպես նաև առանց լիազորագրի ստորագրության (ներկայացուցչության) իրավունք ունեցող անձանց.

46.4. Ընկերության մատակարարների և գործակալների,

46.5. Ընկերության կոնտրագենտների, սեփականատերերի և/կամ իրական շահառուների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի (ղեկավարների).

46.6. Ընկերության մասնակիցների, գործարքների իրականացման մեջ ներգրավված աշխատակիցների կամ կառավարման մարմինների.

46.7. Գործարքների արժույթների.

46.8. Գործարքների մաս կազմող ապրանքների, ծառայությունների, ծրագրային ապահովումների և տեխնոլոգիաների ծագման աղբյուրների.

46.9. Գործառնությունների իրականացման վայրի:

47. Ընկերությունը հաշվի առնելով միջազգային պատժամիջոցների կարգավորումների առանձնահատկությունները, դիտանցման գործընթացում առնվազն պետք է հաշվի առնի.

47.1. աշխարհագրական գործոնները, այդ թվում՝ Միջազգային պատժամիջոցների առավել խիստ և ընդլայնված կարգավորման սուբյեկտ հանդիսացող երկրները, քաղաքները, շրջանները, նավահանգիստները, օդանավակայանները,

47.2. Միջազգային պատժամիջոցների հետ կապված հիմնական բանալի բառերը,

47.3. Միջազգային պատժամիջոցների ենթարկված կողմերին պատկանող կամ նրանց հետ փոխկապակցված կազմակերպություններին և սուբյեկտներին, որոնք կասկածվում են միջազգային պատժամիջոցների շրջանցման մեջ: Ընդ որում, ըստ անհրաժեշտության կարող է հաշվի առնվել նաև վերջիններիս վերաբերյալ ներքին և արտաքին հավաստի տվյալները կամ տեղեկությունները,

47.4. Այն ֆինանսական կազմակերպությունների նույնականացման տվյալները, որոնց վրա տարածվում են Միջազգային պատժամիջոցները,

47.5. Այն երկրների Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրերը(International Securities Identification Numbering System (ISIN)) (առկայության դեպքում):

48. Ընկերությունը, հաշվի առնելով Միջազգային պատժամիջոցների կարգավորումների

առանձնահատկությունները, իրականացնում է հաճախորդների և գործարքների պարբերական դիտանցում: Հաճախորդների վերաբերյալ տվյալների դիտանցումը իրականացվում է հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս և պետք է ունենա շարունակական բնույթ:

49. Սույն Կանոնակարգի 47.1-47.5-րդ ենթակետերով նախատեսված անձինք Միջազգային պատժամիջոցների ցանկերով ստուգվում են նախքան գործարար հարաբերությունների հաստատումը՝ գործարար հարաբերությունների հաստատման փուլում՝ ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ Ընթացակարգով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար նախատեսված միջոցառումներին զուգահեռ:

50. Գործընկերային հարաբերություններ հաստատագրելուց առաջ Ընկերությունը պատշաճ ուսումնասիրության գործընթացում, ի թիվս այլնի, պարզում է հավանական գործընկեր կառույցների մոտեցումները և քաղաքականությունը միջազգային պատժամիջոցների պահանջների տեսանկյունից ռիսկերի հիման վրա ուսումնասիրության, պատժամիջոցներ նախատեսող իրավական ակտերի դրույթների պահպանման գործընթացներում՝ շարունակաբար գնահատելով տվյալ ֆինանսական կազմակերպության միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացը:

51. Հաճախորդի վերաբերյալ տվյալների դիտանցում իրականացնելիս Ընկերությունը առնվազն հաշվի է առնում տվյալ անձի հետ փոխկապակցված բոլոր անձանց, այդ թվում՝ ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցություն անձանց, իրական շահառուներին, տնօրեններին, լիազորված անձանց, երաշխավորներին, հաճախորդի հետ գործարար հարաբերությունները և համատեղ ձեռնարկությունները, ֆիզիկական անձանց դեպքում նաև քաղաքացիությունը, փաստացի բնակության հասցեն և հարկման հիմնական երկիրը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գտնվելու և գործունեության վայրը:

52. Ընկերությունում միջազգային սահմանափակումների և պատժամիջոցների պահանջների շրջանակներում գործարքների դիտարկումը ընդգրկում է առնվազն հետևյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն.

- 52.1.1. հաճախորդի ռեզիդենտության պարզում և գնահատում միջազգային պատժամիջոցների տեսանկյունից,
- 52.1.2. օտարերկրյա հաճախորդի կենսական շահերի կենտրոնի պարզում գնահատում միջազգային պատժամիջոցների տեսանկյունից,
- 52.1.3. այլ երրորդ անձինք, գործընկերներ, ներգրավված երկրներ, արժույթ, ծագման աղբյուր, նպատակ, ապրանքների ու ծառայությունների բնույթ, գործունեություն և տնտեսական նպատակ, այլ գործոններ, ներառյալ քաղաքացիություն, ծննդավայրը, բնակության վայր և այլն, որոնք ՆԴԲ կամ գործարքը կատարող ֆինանսական հաստատության կարծիքով էական դեր կարող են ունենալ միջազգային պատժամիջոցների շրջանցման հարցում:

53. Ընկերության կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ տվյալները ենթարկվում են դիտանցման նախքան գործարքի իրականացումը և հաստատումը:

54. Արժեթղթերով գործարքների դիտանցումն իրականացվում է՝ առնվազն թողարկողի և գործարքում ներգրավված կողմերի և գործարքի շղթայում ներգրավված ֆինանսական հաստատությունների ստուգում իրականացնելու միջոցով: Հետևաբար, նախքան նման գործարքների կնքումը՝ գործարքը նախաձեռնող ստորաբաժանումը պետք է հարցում իրականացնի Պատասխանատու աշխատակցին: Պատասխանատու աշխատակցի կողմից իրականացվող ստուգումը պետք է ներառի, թողարկող և շահառու ֆինանսական կազմակերպություններին, հայտատուին և շահառուներին: Ստուգման արդյունքում Պատասխանատու աշխատակիցը հավանություն է տալիս կամ մերժում է գործարքի իրականացումը՝ հաշվի առնելով ՓԼ/ԱՖ և/կամ պատժամիջոցների շրջանցման ռիսկերի առկայությունը:

55. Միջազգային պատժամիջոցների պահանջների խախտման բարձր ռիսկի չափանիշներով բնութագրվող գործարքի (գործարար հարաբերության) գծով Ընկերությունը կարող է որոշում կայացնել մերժել գործարքը, գործարար հարաբերության հաստատման փորձը կամ դադարեցնել հաճախորդի հետ առկա գործարար հարաբերությունը, ընդ որում՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով Պատասխանատու աշխատակցի նախաձեռնությամբ կազմակերպվում է քննարկում Գործադիր ղեկավարի և, ըստ անհրաժեշտության, վերջինիս նախանշած շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ: Գործարքի կատարման վերաբերյալ քննարկման և վերջնական որոշման արդյունքները ենթակա են արձանագրման:

56. Միջազգային պատժամիջոցների ներքո գտնվող և/կամ համապատասխան ցուցակներում ներառված անձանց հետ փոխկապակցված անձանած մասնակցությամբ գործարքների մասով վերջնական որոշում կայացնելու նպատակով Պատասխանատու աշխատակիցը նախաձեռնում է քննարկում գործադիր մարմնի և ըստ անհրաժեշտության գործադիր մարմնի նախանշած շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ: Գործարքի կատարման վերաբերյալ քննարկման և վերջնական որոշման արդյունքները ենթակա են արձանագրման:

57. Ընկերությունը ուսումնասիրում և գնահատում է իր մատակարարների հետ կնքվող գործարքները, ինչպես նաև Ընկերության կողմից իրականացվող նվիրատվությունների կամ հովանավորչական ծրագրերի շահառուներին՝ պատժամիջոցների փաթեթների համապատասխանության տեսանկյունից: Այդ նպատակով համապատասխան գործարքը նախաձեռնող ստորաբաժանումները նախքան գործարքի կնքումը Պատասխանատու աշխատակցի հետ համաձայնեցնում են համապատասխան գործարքը և մատակարարին:

58. Միջազգային պատժամիջոցների ցանկերում կամ հաճախորդի վերաբերյալ տվյալներում ցանկացած փոփոխության կամ թարմացման դեպքում, Ընկերությունը իրականացնում է դիտանցում փոփոխությունից կամ թարմացումից հետո առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

59. Ընկերությունը Միջազգային պատժամիջոցների ենթարկված կամ պատկան մարմինների կողմից ցուցակված անձանց համընկնությունների ստուգման համար Ընկերությունը կիրառում է հատուկ տեղեկատվական շտեմարան:

60. Ընկերությունը պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան տարին մեկ անգամ, իրականացնի միջազգային պատժամիջոցների դիտանցման գործիքակազմի և համակարգերի արդյունավետության թեստավորում, որն առնվազն պետք է.

60.1. իրականացվի դիտանցման համար սահմանված չափորոշիչների, կատարված վերլուծությունների և հաշվետվությունների հիման վրա,

60.2. ներառի միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման վերաբերյալ տվյալների հավաստիության ու ամբողջականության ստուգում:

61. Ընկերությունը պետք է փաստաթղթավորի միջազգային պատժամիջոցների դիտանցման գործիքակազմը, ինչպես նաև պետք է ապահովի համակարգի սահմանափակումների կամ ռիսկերի վրա հիմնված որոշումների թափանցիկությունը, որոնք դիտանցման հսկողական մեխանիզմների միջոցով չեն բացահայտվում:

62. Միջազգային պատժամիջոցների դիտանցման հսկողական մեխանիզմներից բացի Ընկերությունը պետք է ներդնի նաև համապատասխան մեթոդաբանություն, ներառյալ՝ գործարքների մշտադիտարկման սցենարներ բացահայտելու համար միջազգային պատժամիջոցներից խուսափելու կամ շրջանցելու դեպքերը: Սցենարները պետք է պարբերաբար վերանայվեն և գնահատվեն, որպեսզի ապահովվի մեթոդաբանության համապատասխանությունը միջազգային պատժամիջոցներից խուսափելու կամ շրջանցելու դեպքերին:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

63. Ընկերության Պատասխանատու աշխատակիցը վերլուծում է և գնահատում է իր գործարար բնութագրին ներհատուկ պատժամիջոցների ռիսկերը՝ դրանց զսպման ուղղությամբ մեխանիզմներ մշակելու նպատակով: Ընկերությունը առնվազն տարին մեկ անգամ իրականացնում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի գնահատում՝ հնարավոր թերությունները և խնդիրները հայտնաբերելու նպատակով:

64. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի գնահատումը պետք է ներառի ներհատուկ ռիսկի, դրա կառավարման և մնացորդային ռիսկի գնահատում:

65. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի գնահատման գործընթացում ներհատուկ ռիսկի գնահատումը առնվազն պետք է ներառի.

65.1. Հաճախորդների ռիսկի գնահատում, որի շրջանակներում հաճախորդների բազան ուսումնասիրվում է ռեզիդենտության և բնակության երկրների կամ աշխարհագրական տարածքների կառուցվածքի տեսանկյունից: ՆԴՄ կողմից հիմնավոր և պատշաճ KYC սկզբունքների կիրառումը հաճախորդների բազայի պարբերական ստուգման հետ համատեղ հնարավորություն է տալիս նույնականացնել և բացահայտել այն հաճախորդներին, որոնց նկատմամբ կիրառվել են պատժամիջոցներ:

65.2. Աշխարհագրական տեղակայման ռիսկի գնահատում,

65.3. Առաջարկվող ծառայությունների, այդ թվում՝ գործարքների ռիսկի գնահատում, կոնտրագենտների և միջնորդների ռիսկի գնահատում,

65.4. Ծառայությունների մատուցման շղթայի ռիսկի գնահատում:

65.5. Այն խնդիրները և թերությունները, որոնք բացահայտվել են հսկողության այլ գործընթացներում, ինչպիսիք են՝ մշտադիտարկումը, թեստավորումը և ներքին աուդիտը, նույնպես պետք է ներառվեն միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի գնահատման արդյունքներում:

66. Ընկերությունը պետք է գնահատի նաև միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի մաս կազմող՝ ներհատուկ ռիսկերի զսպմանն ուղղված համապատասխան գործիքակազմի և դրա կիրառման արդյունավետությունը:

67. Ընկերությունը պետք է գնահատի նաև միջազգային պատժամիջոցների շրջանցման մնացորդային ռիսկը, որը որոշվում է իր գործառնությունների ներհատուկ ռիսկի մակարդակի և դրա կառավարման համարժեքության ու արդյունավետության գնահատման արդյունքում:

68. Ընկերության կողմից ապահովվում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի արդյունավետության մշտադիտարկման գործընթացը:

69. Ընկերությունը պետք է իրականացնի միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի հսկողության և հիմնական գործընթացների թեստավորում, որի միջոցով առնվազն ստուգվում է դիտանցման համակարգերի պատշաճ աշխատանքը, ինչպես նաև պարբերաբար գնահատի դրանց արդյունավետությունը ռիսկերի կառավարման տեսանկյունից:

70. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման գործընթացի արդյունավետության մշտադիտարկումն իրականացվում է Պատասխանատու աշխատակցի կողմից՝ տարեկան պարբերականությամբ: Մշտադիտարկման արդյունքներն ամփոփվում են Պատասխանատու աշխատակցի կողմից իրականացվող տարեկան վերջին կիսամյակային հաշվետվության շրջանակներում և ներկայացվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) հաստատմանը:

71. Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարմանն ուղղված ներքին հսկողության համակարգերում խնդիրների բացահայտման դեպքում Պատասխանատու աշխատակցի նախաձեռնությամբ ձեռնարկվում են բացահայտված ռիսկերի զսպմանն ու վերացմանն ուղղված միջազգումներ, որոնք ամփոփ ներկայացվում են սույն Կանոնակարգի 64-րդ կետով նշված հաշվետվության մեջ:

72. Ընկերության ցանկացած աշխատակցի կողմից միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման վերաբերյալ ներքին հսկողության համակարգում թերությունների, ճախողումների և բացթողումների բացահայտման դեպքում վերջինս պարտավոր է անհապաղ դրանց մասին տեղեկատվություն ներկայացնել Պատասխանատու աշխատակցին, որը իր հերթին ըստ անհրաժեշտության ձեռնարկում է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի զսպմանը և վերացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

73. Պատասխանատու աշխատակիցը միջազգային պատժամիջոցների համապատասխանության և միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկերի կառավարման թեմաներվ անձնակազմի համար իրականացնում է ուսուցում առնվազն տարեկան մեկ անգամ կամ ըստ պահանջի՝ միջազգային պատժամիջոցների նոր փաթեթների հրապարակման և ոլորտում էական փոփոխությունների ի հայտ գալու պարագայում, որոնք անմիջականորեն ազդում են Ընկերության պատժամիջոցների ծրագրի և ռիսկի ախորժակի վրա: Տվյալ դեպքում Պատասխանատու աշխատակցի կողմից աշխատակիցների համար ուսուցումը նախաձեռնվում է փոփոխությունը հայտնաբերելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Ընկերության ղեկավարներին տեղեկացումը՝ փոփոխությունը հայտնաբերելուց 1 աշխատանքային օրվա ընթացքում:

74. Նոր ընդունված աշխատակիցների համար ուսուցումն իրականացվում է աշխատանքի ընդունման պահից սկսած երեք ամսվա ընթացքում: Ուսուցման թեմաները և մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը փաստաթղթավորում և պահպանվում է օրենքով սահմանված կարգով:

75. Պատասխանատու աշխատակիցը ևս պետք է մասնակցի սեմինարների և վերապատրաստումների՝ զարգացնելու և բարելավելու ոլորտին առնչվող գիտելիքներն ու փորձը, ինչպես նաև տեղեկացված լինելու կիրառվող միջազգային ստանդարտներից և զարգացումներից:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

76. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ընկերության մասնակիցների Ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) հաստատման օրվանից:

77. Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո Սույն Կանոնակարգով սահմանված և տարեկան պարբերականություն ենթադրող բոլոր հաշվետվությունները, վերլուծությունները, թեստավորումները իրականացվում են սույն Կանոնակարգի հաստատմանը հաջորդող օրացույցային տարվա ընթացքում:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

78. Սույն Կանոնակարգի տիրապետող է հանդիսանում Ընկերության Ներքին դիտարկումների մարմինը:

79. Միջազգային պատժամիջոցների ծրագրերում/փաթեթներում փոփոխություններ և

(կամ) լրացումներ կատարվելու դեպքում Ընկերությունն առաջնորդվում է այդ փոփոխություններով և (կամ) լրացումներով՝ մինչև Կանոնակարգում նոր պահանջներին համապատասխանեցնելը:

80. Կանոնակարգը հաստատմանը հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Քաղաքականությունը CBANet համակարգով ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ: